Известия НАН РА, Науки о Земле, 1993, XLVI, 73—74

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Ա. Հ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Հայ երկրաբանական գիտությունը, Հայաստանի երկրաբանական ծառայությունը և բարձրագույն դպրոցը կրեցին մեծ կորուստ Ծանր հիվանդությունից հետո կյանքի 82-րդ տարում վախճանվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրի մասին գիտությունների սեկցիայի նախագահ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Արշալույս Համբարձումի Գարրիելյանը։

Ա. Գարրիելյանը ծնվել է 1912 թ. հունիսի 14-ին Կաչաղակի մարզի Նախիջևան գյուղում, հողագործի ընտանիքում։ 1918 թ. նրա ծնողները գաղթում են հայրենի օջախից և բնակություն հաստատում Թալինի շրջանի Արեղ գյուղում։ Սկզբնական կրթությունը ստանում է նախ տեղի, իսկ այնուհետև Երևանի Մ. Գորկու անվան դպրոցներում։

1931 թ. նա ընդունվում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Քիմիական ֆակուլտետը, իսկ երբ 1934 թ. Երևանի համալսարանում բացվում է աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետը Գարրիելյանը փոխադրվում է համալսարան ու սովորում նորաբաց ֆակուլտետի երկրաբանական բաժնում, որը և գերազանցությամբ ավարտում է 1938 թվին։ Արժանի է հիշատակման, որ դեռևս ուսումնառության տարիներին նա իր տաղանդով, գիտելիքներով և աշխատասիրությամբ գարմացնում է ականավոր երկրաբան-պրոֆեսորներ Տիգրան Ջրբաշյանին և Հ. Կարապետյանին, որոնք նրան գուշակում են փայլուն ապագա։

1938 թ. համալսարանի ռեկտորի որոշմամբ Ա. Գարրիելյանը (նաև համակուրսեցիներ Վաչե Հասրաթյանը և Թադևոս Թադևոսյանը) գործուղվում են Մոսկվա, ուր սովորում է մայրաքաղաքի Ս. Օրջոնիկիձեի անվան երկրաբանական-հետախուզական ինստիտուտի (ՄԳՐԻ) ասպիրանտուրայում, նշանավոր երկրաբաններ Վ. Վ. Մենների և Ն. Ս. Շատսկու ղեկավարությամբ։

1941 թ. Ա. Գարրիելյանը վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում համալսարանում՝ որպես դասախոս և ԳԱ հայկական ֆիլիալի (Արմֆան) երկրաբանական ինստիտուտում՝ գիտական աշխատող։ Հայրենական մեծ պատերազմի առաջին տարիներին նա գիտահետազոտական աշխատանքներ է ծավալում Մեղրիի շրջանում, ուսումնասիրելով այստեղ լայն տարածում և երկրաբանական տեսակետից մեծ հետաքրքրություն ներկայացնող երրորդական հասակի նստվածքային առաջացումների շերտագրությունը և հելարանությունը։ 1943 թ. նա

պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «ՀՀ Կոտայքի շրջանի երրորդականի նստվածքները» թեմայով, որը հրատարակվում է 1947 թվին։

1945 թ. նա հաստատվում է դոցենտի պաշտոնում՝ շարունակելով իր գիտական գործունեությունը ՀՀ գիտությունների ակադեմիայում, ուր երկար տարիներ եղել է ավագ գիտական աշխատող և ղեկավարել երկրաբանության ինստիտուտի համընդհանուր երկրաբանության բաժին։ 1949 թ. մինչև 1983 թ. Ա. Գարրիելյանը ղեկավարել է համալսարանի երկրաբանության և հետախուզության ամբիոնը։ 1954 թ. Գարրիելյանը պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Հայաստանի երկրաբանական կառուցվածքի պատմությունը երրորդական ժամանակաշրջանում» թեմայով։ 1956 թ. նա ստանում է պրոֆեսորի կոչում և նույն տարում ընտրվում ՀՀ ԳԱ թղթակից-անդամ. 1961 թ. նրան շնորհվում է հանրապետության գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

1959 թ. գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ Ա. Գարրիելյանի «Հայաստանի տեկտոնիկայի հիմնական հարցերը» մենագրությունը, որը հանդիսանում է Հայաստանի և Փոքր Կովկասի երկրաբանության ուսումնասիրությանը վերաբերող կարևոր գիտական աղբյուր։ 1964 թ. նույն հրատարակությամբ լույս է տեսնում նրա «Հայաստանի պալեոգենը և նեոգենը» ծավալուն մենագրությունը, որը հեղինակի այդ բնագավառում կատարած գիտական հետազոտությունների հանրագումարն է։ 1968 թ. համալսարանի «Միտք» հրատարակչությունը լույս ընծայեց «Հայաստանի հանրապետության տեկտոնական քարտեզը և ինտրուզիվ ֆորմացիաների քարտեզը» աշխատությունը, որի հեղինակային կոլեկտիվի ղեկավարը պրոֆ. Ա. Գարրիելյանն էր։ Նա կազմել է նաև Եվրոպայի միջազգային տեկտոնական քարտեզի Փոքր Կովկասի բաժինը։

Բազմավաստակ երկրաբան-գիտնականը բազմիցս ակտիվ մասնակցություն է հանդես բերել Միութենական, Անդրկովկասյան և Միջազգային խորհրդակցություններին և գիտաժողովներին, որոնք նվիրված էին տեկտոնիկայի և շերտագրության պրոբլեմներին։ Նրա զեկուցումները հրապարակվել են Գերմանիայում (Բոնն, 1962) և Հնդկաստանում (Դելհի, 1964), նվիրված՝ միջին և վերին էոցենի սահմանի և Կովկասի տեկտոնական կառուցվածքի հարցերին։ Նա ղեկավարել է խորհրդային պատգամավորների խումբը՝ Եվրոպայի մանրէաբանական գիտանստաշրջանում (Վարշավա), հանդես է եկել «Հայաստանի միջին էոցենը» զեկուցումով (Բուդապեշտ, 1971), ինչպես նաև Ալպիական ծալքավոր մարզի տեկտոնիկային նվիրված միջազգային խորհրդակցությունում (Թբիլիսի, 1965) և Եվրոպայի, Մերձավոր Արևելքի տեկտոնական քարտեզներին նվիրված միջազգային գիտաժողովում (Բաքու, 1968)։

Պրոֆ. Ա. Գարրիելյանը «ՀՀ ԳԱԱ տեղեկագրի. գիտություններ Երկրի մասին» հանդեսի պատասխանատու խմբագիրն էր (1958—1966 և 1985—1993), Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, նախագահության անդամ (1984-ից), վերջապես Միջազգային (տեկտոնական) և համամիութենական (շերտագրական) գիտակոորդինացիոն խորհուրդների անդամ էր։

Վաստակաշատ երկրաբան-մանկավարժն այն հազվադեպ գործիչներից էր, որը հավասարապես զուգակցում էր գիտահետազոտական և գիտամանկավարժական աշխատուժը։ Նա բացառիկ դեր խաղաց երկրաբանական ազգային կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում. բավական է ասել, որ հանրապետության գիտական, արտադրական և բարձրագույն կրթության աշխատողների ճնշող մեծամասնությունը հանդիսանում են նրա սաները, որոնց զգալի մասը գիտության թեկնածուներ, դոկտոր-պրոֆեսորներ, առաջատար մասնագետներ և վաստակավոր երկրաբաններ են։ Մեծ փորձ և ձիրք ունեցող մանկավարժի դասախոսությունները հագեցված էին գիտական (նաև գործնական) նոր գաղափարներով, ուսանողները նրան ունկընդրում էին լարված ուշադրությամբ։

Պրոֆ. Արշալույս Գարրիելյանը թողել է հարուստ և բազմատարր գիտական ժառանգություն։ Նրա աշխատություններում լուսաբանված են Հայաստանի երկրաբանական կառուցվածքի, հատկապես տեկտոնիկայի, շերտագրության և երկրաբանական զարգացման պատմության հարցերը։ Մշակել է հանրապետության (լայն առումով) պալեոգենի ու նեոգենի շերտագրական սխեման, Փոքր Կովկասի ու հարակից շրջանների տեկտոնական մասնատման սխեման, բնութագրել առանձին տեկտոնական ստրուկտուրաները՝ ընդգծելով խորքային բեկվածքների դերը երկրաբանական կառուցվածքի, հրաբխականության, մագմատիզմի ու մետաղածնության մեջ։ Նա առաջարկել է Ալպիական ծալքավոր գոտու, Կովկաս-Անատոլիա-Իրանական հատվածք տեկտոնական մասնատման սխեման, մասնակցել նախկին Միության և նրա հարավի և Եվրոպայի միջազգային տարբեր մասշտաբների տեկտոնական քարտեզների կազմմանը։

Վաստակաշատ երկրաբան-մանկավարժի, գիտնականի, հանրապետությունում իր գործի լավագույն մասնագետներից մեկի ակադեմիկոս Արշալույս Գարրիելյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում։

ՀՀ ԳԱԱ Քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ